3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Ա.Այը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է թուրքերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից թուրքերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ թարգմանիչ Գևորգ Սիմոնյանին:

Գևորգ Սիմոնյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 61-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Աիմեթ Այի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննված թիվ 58219822 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Գևորգ Սիմոնյանին /անձնագիր 007155096, տրված՝ 21.07.2015թ.:

Գևորգ Սիմոնյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Գևորգ Սիմոնյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ
հսկողության վարչության դատախազ **Վ.Ղազարյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ Գևորգ Սիմոնյան

«05» 08 22 թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

27.09.2022թ. ք. Գորիս

Սյունիքի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Գ.Ա.Մինասյանս, ուսումնասիրելով ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունից ստացված թիվ 32155222 քրեական գործով Կարո Մուշեղի Մարտիրոսյանի և Սևակ Սարոյի Աբրահամյանի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննված թիվ 32155222 քրեական գործն ըստ մեղադրանքի Կարո Մուշեղի Մարտիրոսյանի և Սևակ Սարոյի Աբրահամյանի՝ 01.08.2003թ. ուժի մեջ մտած և մինչև 01.07.2022թ. գործող ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի դատախազություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝

1. Մեղադրական եզրակացությունը հաստատելու կամ այն վերակազմելու դեպքում հսկող դատախազն իր որոշմամբ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ հանձնում է իրավասու դատարան:

...

3. Վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազն անմիջապես գրավոր տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները:...

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով տուժող Սոհրաբ Ղոլիի Մոհարրամի Գարգարին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին, ուստի մեղադրական եզրակացությունը, այն հաստատելու մասին որոշումը և ուղեկցական

գրությունը տուժողին հասկանալի լեզվով հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն գրավոր թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (ծնված 15.01.1964թ., ավարտել է Երևանի աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանը՝ արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն) մասնագիտությամբ, պարսկերեն լեզվի թարգմանչի որակավորմամբ, նույնականացման քարտ՝ 000407163, տրված 27.12.2013թ.):

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Կարո Մուշեղի Մարտիրոսյանի և Սևակ Սարոյի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 32155222 քրեական գործով մեղադրական եզրակացության և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը պարսկերեն գրավոր թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (ծնված 15.01.1964թ., ավարտել է Երևանի աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանը՝ արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն) մասնագիտությամբ, պարսկերեն լեզվի թարգմանչի որակավորմամբ, նույնականացման քարտ՝ 000407163, տրված 27.12.2013թ.:

Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Սյունիքի մարզի դատախազի
տեղակալ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական Գ.Ա.Մինասյան

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ ներգրավելու մասին

29-ը սեպտեմբերի 2022թ. **ք.Կապան**

Սյունիքի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Ն.Արշակյանս, ուսումնասիրելով թիվ 45102822 քրեական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2022թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 45102822 քրեական վարույթը:

Քրեական վարույթի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հայերենից պարսկերեն թարգմանել թիվ 45102822 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը, դրան կից հավելվածները, մեղադրական եզրակացությունը հաստատելու և վարույթի նյութերն իրավասու դատարան հանձնելու մասին որոշումը, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի պետին ուղղված գրությունը, քանի որ մեղադրյալ, ԻԻՀ քաղաքացի Սաիդ Ազիմին չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 38-րդ և 61-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 45102822 քրեական վարույթով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին:
2. Հրանուշ Թախմասյանին պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին

Սյունիքի մարզի դատախազության դատախազ,
երրորդ դասի խորհրդական **Ն.Արշակյան**

Սույն որոշման ինձ հայտնվել է 2022թ. սեպտեմբերի _____ ին: Ես նախազգուշացվել եմ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ **Հրանուշ Թախմասյան**

Ո Ր Ո Շ Ու Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

08-ը սեպտեմբերի 2022թ. ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության քննչության առաջնության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Մ.Հակոբյանս, ուսումնասիրելով Ֆարհադ Աբուլֆազլ Խալիլի Յալեհ Ղարշուի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84109122 քրեական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2022 թվականի սեպտեմբերի 08-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի կարգով ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84109122 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Ֆարհադ Աբուլֆազլ Խալիլի Յալեհ Ղարշուի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով և 399-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրը որոշում է կայացվել թիվ 84109122 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

Նկատի ունենալով, որ սույն քրեական վարույթով մեղադրյալ Ֆարհադ Աբուլֆազլ Խալիլի Յալեհ Ղարշուն հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է պարսկերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, և այն հաստատելու մասին հսկող դատախազի որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB No 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, այն է՝ արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն), ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ճեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 61-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Ֆարհադ Աբուլֆազլ Խալիլի Յալեհ Ղարշուի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84109122 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB No 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներին և պարտականություններին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական վարույթով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության
առողջության դեմ ուղղված հանցագործությունների
գործերով վարչության ավագ դատախազ,
արդարադատության առաջին դասի խորհրդական՝ Մ.Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Հրանուշ Թախմասյան

«08» 09 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Երևան

14.09.2022թ.

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Աշոկ Կումար Միթթալի հանձնումը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազի որոշումը և կարգադրությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

14.09.2022թ. ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել Աշոկ Կումար Միթթալի հանձնումը մերժելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել (...) վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ Աշոկ Կումար Միթթալը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ Մանիկ Խեչոյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Աշոկ Կումար Միթթալի հանձնումը մերժելու մասին որոշման հայերենից հնդկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Մանիկ Խեչոյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AT 0509438, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ հնդկերենի թարգմանչի սերտիֆիկատ-դիպլոմ՝ տրված 05.06.2013թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված

ապացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ *Ա. Հովհաննիսյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների բաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ Մ.Խեչոյան «...14.....» ...09..... 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

05.09.2022թ. ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Արարատ Բեքիջանի վերաբերյալ Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) իրավասու մարմնից ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

01.09.2022թ. ՀՀ արդարադատության նախարարությունից ստացվել են Արարատ Բեքիջանի վերաբերյալ ԻԻՀ իրավասու մարմնի փաստաթղթերը՝ պարսկերեն լեզվով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին, իր ստորագրությամբ հաստատել ապացուցողական կամ վարութային այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ վարույթի լեզուն գրական հայերենն է, (...) այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ԻԻՀ իրավասու մարմնից Արարատ Բեքիջանի վերաբերյալ ստացված փաստաթղթերի պարսկերենից հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0780981, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ դիպլոմ РВ № 013781՝ տրված 05.07.1990թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ

ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ *Ա. Հովհաննիսյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Հ. Թախմազյան «05» 09 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

16.09.2022թ. *ք.Երևան*

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №58201521 քրեական գործով հետախուզվող Էլահեի Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աբբարի Դեհղանի Նուշաբադիի վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 29.12.2021թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №58201521 քրեական գործով հետախուզվող Էլահեի Հասանի Բայաթին և Մոհամմադ Ալի Աբբարի Դեհղանի Նուշաբադիին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Էլահեի Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աբբարի Դեհղանի Նուշաբադիի հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել են լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ):

14.07.202թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են ՀՀ արդարադատության նախարարի կողմից տրված երաշխիքները (№11.2/30657-22 գրությունը): Երաշխիքների մնացած մասը տրամադրվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրությամբ: Սույն երաշխիքներն անհրաժեշտ է ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին՝ Էլահեի Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աբբարի Դեհղանի Նուշաբադիի հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵԽ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵԽ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Էլահեի Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աբբարի Դեհղանի Նուշաբաղիի հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ *Ա.Խաչատրյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ «16»..09..... 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

19. 09. 2022թ. ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության Միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով թիվ 31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 31161719 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Մարտին Ֆիրդուսի Մարգարյան հայտնաբերվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունից ստացվել է Մարտին Ֆիրդուսի Մարգարյան հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ գերմեներեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Նկատի ունենալով, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության հասցեագրված՝ Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել գերմաներեն, իսկ ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՑԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման հարցման գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր ԲԱ սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ **Ա.Խաչատրյան**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Ա. Հայրապետ «19» 09 2022թ.

Ս. Հաթյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

27.09.2022թ. ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Տ.Ենոքյանս, վերանայելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-58-20 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2020 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Վահիկ Սերուժի Մանուկյանսին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-58-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել գերմաներենից հայերեն թարգմանել Լիխտենշտեյնի Իշխանապետության և Շվեյցարիայի Համադաշնության իրավասու մարմիններից ստացված նյութերը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Սաթենիկ Հայրապետի Հայթյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ BA0387407, տրված՝ 02.04.2014թ., 001-ի կողմից, դիպլոմ՝ N 003927, տրված՝ 29.07.1995թ., «Ռոմանոգերմանական լեզուներ և գրականություն», թարգմանչի որակավորմամբ, գերմաներեն մասնագիտությամբ):

Սաթենիկ Հայթյանը ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Վահիկ Սերուժի Մանուկյանսին պատկանող գույքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-58-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Սաթենիկ Հայրապետի Հայթյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ BA0387407, տրված՝ 02.04.2014թ., 001-ի կողմից, դիպլոմ՝ N 003927, տրված՝ 29.07.1995թ., «Ռոմանոգերմանական լեզուներ և գրականություն», թարգմանչի որակավորմամբ, գերմաներեն մասնագիտությամբ):

Սաթենիկ Հայրապետի Հայթյանին նախազգուշացնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության հիմքերի վերաբերյալ տվյալները և դրա ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ **Տ.Ենոքյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրացա սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղվածքը:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ *Սաթենիկ Հայթյան*

«27» 09 2022 թ.